

## Յովսէփ Նալպանտեան

Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում գրականագետ, մատենագետ, հրապարակախոս Յովսէփ Նալպանտեանի հետ: Հայ մշակույթին մատուցած ծառայությունների, ազգային, հասարակական կյանքում ունեցած ավանդի համար Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը «Հակոբ մեղապարտ» հուշամեդալով պարգևատրեց Յովսէփ Նալպանտեանին: Այնուհետև ելութ ունեցան փոխտնօրեն Հայկանուշ Ղազարյանը, բգդ պրոֆեսոր, Սամվել Մուրադյանը, բգդ պրոֆեսոր Ռուբեն Սաքապետոյանը, բգդ պրոֆեսոր Սերժ Սրապիոնյանը, բանաստեղծ, հրապարակախոս Արևշատ Ավագյանը: Միջոցառման ընթացքում Արաքսյա Լազարյանը կարդաց Սիամանթոյի «Արցունքներս», Նաիրի Զարյանի «Հայոց լեզու» բանաստեղծությունները: Արսեն Համբարյանը հանդես եկավ Դանիել Վարուժանի «Ձոն » բանաստեղծության խոսքերով գրված երգով: Միջոցառման ավարտին շնորհակալական խոսքով հանդես եկավ Յովսէփ Նալպանտեանը և իր հեղինակած գրքերից նվիրեց գրադարանին: